ՀԱՅՐԵՆԱԿՑԱԿԱՆ ՄԻՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

ԳԱԼՍՏՅԱՆ Ն. Մ.

Քաղաքացիական հասարակությունը նոր իրողություն է հետխորհրդային Հայաստանի հասարակական-քաղաքական կյանքում: Արդի պայմաններում առանձնակի նշանակություն են ստանում այդ հասարակության ձևավորման և զարգացման գործընթացում էթնոմշակութային գործոնին և դրա ունեցած դերին նվիրված ուսումնասիրությունները: Հատկապես կարևորվում է նաև այն խնդրի վերլուծությունը, թե ազգային մշակույթը որքանով է նպաստում կամ խոչընդոտում Հայաստանում քաղաքացիական հասարակության ձևավորմանը, և ի տարբերություն արևմտյանի՝ էթնիկ գործոնը ազգային ի՞նչ ինքնատիպություն է հաղորդում դրա կայացմանը: Քաղաքացիական հասարակությունը ծագել է Արևմուտքում և կրել այդ հասարակության արժեհամակարգը: Այդ առումով Հայաստանում մշակութային նոր տարրերի ներթափանցումը, անշուշտ, իր ազդեցությունն է թողնում հայոց սոցիոնորմատիվ և հումանիտար մշակույթի վրա: Քաղաքացիական հասարակության ձևավորումը Հայաստանում ունի ընդամենը մոտ քսան տարվա պատմություն և այն առաջին հերթին վերաբերում է երրորդ սեկտորին, որը հիմնականում ներառում է ոչ կառավարական, հասարակական կազմակերպությունները: Դրանք բոլոր ժողովրդավարական երկրներում քաղաքացիական հասարակության հիմքն են, ձևավորվում են որպես այլընտրանք պետական և առևտրային սեկտորներին: Եթե պետական սեկտորը հասարակության մեջ իրականացնում է կառավարչական գործառույթ, առևտրային սեկտորը՝ տնտեսական, ապա երրորդ սեկտորը՝ սոցիալական: Համեմատության համար նշենք, որ, ի տարբերություն Գերմանիայի, Ռուսաստանի Դաշնությունում երրորդ սեկտորին են պատկանում ոչ միայն ոչ առևտրային կազմակերպությունները, այլև քաղաքական կուսակցությունները, ԶԼՄ-ները և պետությունից անկախ բիզնեսը, որոնք, փորձագետների կարծիքով, իրական իշխանություն չեն[1]: Հայաստանում հասարակական կազմակերպությունների գործունեությունը կարգավորվում է 2001 թվականին ընդունված «Հասարակական կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքով[2]: ՀԿ-ները համարվում են ոչ առևտրային,

---

[1] **Алексеева Л.** *Новые тенденции в развитии гражданского обшества в России, http://www.hrights.ru/text/b24/Chapter1%202.htm (14.09.2011).*

[2] *Հայաստանի Հանրապետության օրենքը «Հասարակական կազմակերպությունների մասին», ՀՀ պաշտոնական տեղեկագիր, N 42, 27.XII.2001:*

շահույթ չհետապնդող կազմակերպություններ: Ըստ արդարադատության նախարարության պետական ռեգիստրի գործակալության տվյալների՝ 2009 թ. նոյեմբերի դրությամբ Հայաստանում գրանցված է 5206[3], իսկ 2010 թ. դրությամբ՝ 5529[4] ՀԿ, որոնցից համապատասխանաբար 1800-ը և 1822-ը պետական ռեգիստրում չեն վերագրանցվել: Նշված օրենքով է կարգավորվում նաև ՀՀ-ում գործող հայրենակցական միությունների գործունեությունը: Մասնավորապես կորուսյալ հայրենիքի գաղափարի շուրջ ընտանիքներով և բնակավայրի ծագմամբ դրանց ձևավորումը, ի տարբերություն արևմտյանի, հայ հասարակությունում ձևավորվող քաղաքացիական հասարակությանը հաղորդում է ազգային մշակութային ինքնատիպություն: Ներկայումս Հայաստանում գործում է շուրջ 100 հայրենակցական միություն, և կարևոր է այն հարցը, թե ինչ սկզբունքներով են ձևավորվում դրանք, ինչ գործունեություն են ծավալում, ինչ դեր ունեն հայ ժողովրդի և նրա ենթաէթնիկ խմբերի մշակութային ինքնության պահպանման գործում և ինչ հիմնախնդիրների են առնչվում[6]: Անդրադառնալով «Հասարակական կազմակերպությունների մասին» օրենքին՝ որոշ հայրենակցական միությունների ղեկավարներ նշում են, որ այդ օրենքը կաղապարի մեջ է դնում դրանց գործունեությունը, քանի որ ՀԿ-ների հետ ունեն ընդամենը մեկ ընդհանրություն, այն է, որ երկուսն էլ շահույթ չհետապնդող կազմակերպություններ են: Սակայն ծագումով, էությամբ, բովանդակությամբ, գործառույթով ու կառուցվածքով ունեն բազմաթիվ տարբերություններ[6]: Հայաստանում գործող հայրենակցական միությունները շատ խայտաբղետ են, և դրանք պայմանականորեն կարելի է բաժանել երկու խմբի.

Առաջին. *ըստ Հայաստանի մարզերի կամ հայ ժողովրդի ներէթնիկ խմբերի առանձնահատկությունների հիման վրա ձևավորված հայրենակցական միություններ: Դրանք միավորում են նույն բնակավայրից սերված մարդկանց, որոնց գլխավոր նպատակը նրանց համախմբումն է, համերկրացիների հետ կապերի ամրապնդումը, մասնակցությունը Հայաստանի և իր բնակավայրի մշակութային կյանքին և տնտեսության զարգացմանը: Այսպես, ապարանցիները ստեղծել են «Նիգ-Ապարան», սյունիքցիները՝ «Սյունիք», լոռեցիները՝ «Լոռվա ձոր», ջավախեցիները՝ «Ջավախք», գուգարքցիները՝ «Հանուն Գուգարաց աշխարհի», արցախցիները՝ «Արցախ», զարդմանցիները՝*

---

[3] *Հայաստանում պաշտոնապես գրանցված է 74 կուսակցություն և 5206 ՀԿ, http://www.7or.am/hy/news/2009-11-04/8036/(15.04.2009):*

[4] *Տվյալները տրամադրել է ՀՀ արդարադատություն նախարարության պետական ռեգիստրի գործակալությունը (18.03.2011):*

[5] *Այդ նպատակով 2010-2011 թթ. 18 փորձագիտական խորացված հարցազրույցներ են իրականացվել ՀՀ օրենսդիր, գործադիր և տեղական ինքնակառավարման մարմինների ներկայացուցիչների, այդ խնդրին առնչվող գիտնականների, հասարակական-քաղաքական գործիչների, ազգային փոքրամասնությունների ՀԿ-ների և հայրենակցական միությունների պատասխանատուների հետ:*

[6] *Հայրենակցական միություններ՝ պառակտո՞ղ, թե միավորող. http://www.168.-am/am/articles/3574*

«Գարդման», նոյեմբերյանցիները՝ «Նոյեմբերյան» հայրենակցական միությունները և այլն: Բարձր գնահատելով հայրենակցական միությունների այդ հատվածի դերը մեր ժողովրդի կյանքում, այնուհանդերձ, ոչ միանշանակ է գնահատվում դրանց գործունեությունը: Ազգագրագետ Հ. Մարությանը, անդրադառնալով այդ խնդրին, արտահայտեց հետևյալ տեսակետը. «Ես գտնում եմ, որ Հայաստանում ներէթնիկ խմբերի՝ լոռեցիների, ապարանցիների, շամշադինցիների միությունները արդարացված չեն: Այդ միությունները, ըստ իս, գալիս են լուծելու սոցիալական, քաղաքական հարցեր: Դրանցից ո՞րն է առաջնայինը, դժվարանում եմ ասել, օրինակ՝ լոռեցիները դպրոցը վերանորոգելու, մանկապարտեզը վերաբացելու կամ հուշարձան կանգնեցնելու խնդիր են լուծում Ռուսաստանում աշխատող լոռեցիների հաշվին: Եթե սփյուռքահայի հետ պարզապես խոսի գյուղապետը, դա էն չի: Իսկ եթե խոսում է հայրենակցական միության անունից, ավելի ծանրակշիռ է դառնում»[7]: Ընդհանուր առմամբ, արևմտահայ հենքով ստեղծված միությունները վերապահումով են մոտենում ոչ միայն այդ կազմակերպությունների գործունեությանը, այլև հայրենակցական կոչվելու գաղափարին: Մեր այն հարցին, թե «Որքանո՞վ է նպատակահարմար, երբ Հայաստանում բնակվող հայ ժողովրդի ներէթնիկ խմբերը (ապարանցիները, լոռեցիները, սյունեցիները և այլն) ստեղծում են հայրենակցական միություններ», Հաճրն հայրենակցական միության ատենապետ Հ. Գրիգորյանն արտահայտեց հետևյալ կարծիքը. «Ստեղծվում են նորընծա հայրենակցական միություններ, չիմանալով թե ինչ է հայրենակցական միությունը: Ես որևէ մեկին դեմ չեմ: Բայց «հայրենակցական» միությունը հայրենի երկրից ներգաղթած մարդկանց ու նրանց ժառանգներից կազմված միություններն են, որոնք իրենց ինքնությունը, ինքնատիպությունը, առանձնահատկությունները, մշակույթը պահպանելու համար են: Ուղղակի հարկ է զանազանել հայրենակցական միությունները պարզապես հասարակական կազմակերպություններից: Մայր հայրենակցական միությունները մի քանիսն են՝ Հաճրն, Ադանա, Վան, Մուսալեռ, Էրզրում, իսկ մնացածները լավ է, ողջունելի է, որ կան, բայց պարզապես կարող են կոչվել բարեգործական կազմակերպություններ»[8]:

«Սյունյաց երկիր» թերթի խմբագիր Ս. Ալեքսանյանը, անդրադառնալով «Սյունիք» հայրենակցական միության ստեղծմանը, նշում է. «Հասկանալի և բացատրելի կլիներ, եթե նման հայրենակցական միություն ստեղծեին այն սյունեցիները, որոնք ասենք Ռուսաստանում են կամ այլ երկրներում: Բայց բարեբախտաբար, Սյունիքը Հայաստանի Հանրապետության կազմում է, սյունեցիները ապրում են իրենց պատմական հայրենիքում: Եվ մեր փոքր հան-

---

[7] *Ազգագրագետ Հ. Մարությանի հետ հարցազրույցն իրականացվել է 11.04.2011 թ. Երևանում: Տե՛ս* **Գալստյան Ն.,** *Խորացված հարցազրույցներ, Ե., 2011, տ. 5, էջ 2:*

[8] *Հաճրն հայրենակցական միության ատենապետ* **Հ. Գրիգորյանի** *հետ հարցազրույցն իրականացվել է 06.07.2011թ. Երևանում: Տե՛ս* **Գալստյան Ն.,** *Խորացված հարցազրույցներ, տ. 6, էջ 4:*

բապետությունում հիմա էլ սյունեցիների հայրենակցական միություն ստեղծելը ոչ միայն տարօրինակ է, այլև չի դիմանում ոչ մի քննադատության: Հասկանալի է, որ նման միության ստեղծումը հետապնդում է քաղաքական նպատակ՝ փորձում են որոշ մարդկանց համար ստեղծել քաղաքական ռեսուրս»[9]: Այդ հենքով ստեղծված հայրենակցական միությունների ղեկավարների մի մասը համաձայն են այն տեսակետին, որ դրանք ստեղծվում են քաղաքական նպատակով, իսկ մյուս մասն ունի բացասական դիրքորոշում: Այսպես, «Նոյեմբերյան» հայրենակցական միության պատվավոր նախագահ, գրողների միության նախագահ Լ. Անանյանը բնական համարեց դրանց քաղաքականացումը, սակայն միաժամանակ նշեց, որ այդ բոլորն արվում է տարածաշրջանի առջև ծառացած որոշակի խնդիրներ լուծելու համար[10]: «Ջավախք» հայրենակցական միության նախագահ Շ. Թորոսյանը իրենց պարագայում արդարացված և անխուսափելի համարեց միության քաղաքականությունը. «Ջավախքը» իր տեսակով արդեն քաղաքական խնդիր է: Եթե նույնիսկ մենք միայն կրթամշակութային խնդիրներով էլ զբաղվենք, մինչև-նույն է, ուզենք-չուզենք առնչվում ենք քաղաքականությանը: Գիրք ենք ուզում տանել, վրացական իշխանությունները չեն թողնում, թերթ ենք ուզում տանել՝ չեն թողնում, տերյանական օրեր ենք անում՝ ասում են՝ Տերյանի լեզուն եք փչացնում, քաղաքականություն է: Այստեղ և՛ քաղաքական ուժերի, և՛ իշխանությունների մեջ փնտրում ենք ուժերի, որոնք սատար են կանգնելու Ջավախքի հիմնախնդիրների լուծմանը: Եվ պատահական չէ, որ ես պատգամավոր եմ ընտրվել «Հզոր հայրենիքից»՝ որպես ջավախեցի: Սա արդեն քաղաքականություն է: Ես մեր մասով դա արդարացված տեսնում եմ»[11]: Դրանով հանդերձ, ըստ միության ղեկավարի, ջավախեցիների համախմբման և ազգային ինքնության պահպանման համար ստեղծման օրվանից միությունը ծավալում է ակտիվ գործունեություն: Այդ կապակցությամբ նա նշեց, որ հրատարակում են թերթ՝ «Ասպնջակ», որը 2006 թ. անվանափոխվեց՝ «Հայրենիք»: Այն 1000 տպաքանակով անվճար ուղարկվում է Ջավախք:

---

[9] *Ի՞նչ է հայրենակցական միությունը հայրենիքում,* http://www.aravot.am/am/articles/politics/4318/view/ubmivzgavvc.html*: Այդ առումով վիճակը ավելի բարդ է սփյուռքում: ԱՄՆ-ի Լոս Անջելես քաղաքում գործում են մի քանի տասնյակի հասնող հայկական հայրենակցական միություններ՝ իրանահայերի, պոլսահայերի, իրաքահայերի և սիրիահայերի: Ավելին, իրանահայ միությունը տրոհվում է քաղաքների՝ թեհրանահայերի և թավրիզահայերի միությունների: Հոդվածագիրը զավեշտալի է համարում այն փաստը, որ Հայաստանից Լոս Անջելես տեղափոխված հայերը որոշել են հիմնել հայաստանցի հայերի միություն, թեև գործում են գյումրեցիների և երևանցիների մի քանի միություններ: Սա արդեն կարող է համարվել հայ ժողովրդի հատվածների միջև սեպ խրելու ամենաակնառու փորձը: Տե՛ս Սեպացող ժողովուրդ,* http://www.zhamanak.com/article/11833/

[10] *«Նոյեմբերյան» հայրենակցական միության պատվավոր նախագահ Լ. Անանյանի հետ հարցազրույցն իրականացվել է 13.04.2011 թ. Երևանում: Տե՛ս* **Գալստյան Ն.,** *Խորացված հարցազրույցներ, տ. 7, էջ 5:*

[11] *«Ջավախք» հայրենակցական միության նախագահ Շ. Թորոսյանի հետ հարցազրույցն իրականացվել է 18.05.2011 թ. Երևանում: Տե՛ս* **Գալստյան Ն.,** *Խորացված հարցազրույցներ, տ. 8, էջ 6:*

Հրատարակում են գրքեր: Մեծ շուքով նշում են ջավախքցի մեծերի՝ Տեր-յանի, Հավասու, Ջիվանու օրերը: Որոշակի աջակցություն են ցուցաբերում նաև դպրոցներին: Ըստ նրա՝ բարբառը ջավախեցու ինքնության կարևոր անբաժան մասն է. «Եթե 2 ջավախքցի հանդիպում են, առաջին հարցերից մեկը բարբառի մասին է, եթե գիտես բարբառը, արդեն ջավախքցի ես»[12]: Անդրադառնանք նաև «Նիգ-Ապարանի» գործունեությանը, որի պատվավոր նախագահը հանրապետության գլխավոր դատախազ Ա. Հովսեփյանն է: Այն հանրապետությունում գործող ամենախոշոր հայրենակցական միությունն է, որը Հայաստանում և դրանից դուրս ունի շուրջ 48 տարածքային կառույց, սակայն ի տարբերություն մյուսների՝ դրան անդամակցում են նաև ծագումով ոչ ապարանցիներ: Գործադիր տնօրեն Տեր Մխիթարը հարցազրույցի ժամանակ նշեց, որ ուղղորդվելով կանոնադրությամբ և հայրենակցականի պատվավոր նախագահի հրահանգով՝ միությունը քաղաքականությամբ չի զբաղվում. «Բայց որևէ քայլ, որևէ խոսք եթե այս պետության ամրացման և մեր բռնած պետականաշինության գործընթացին չի հարում, չի դառնում հիմնաքար, մեզ համար անընդունելի է»[13]: Մինչդեռ փաստերի վերլուծությունը ցույց է տալիս, որ 2008 թ. նախագահական և 2009 թ. Երևան քաղաքի ավագանու ընտրություններում հայրենակցական միության խորհուրդը հանդես է եկել հայտարարությամբ և սատարել Հայաստանի հանրապետական կուսակցությանը և նրա թեկնածուներին[14]: Ըստ գործադիր տնօրենի՝ հայ ժողովրդի, նաև ապարանցիների մշակութային ժառանգության պահպանման գործում հայրենակցական միությունը կատարում է հսկայածավալ աշխատանք: Արագած լեռան շուրջ կազմակերպած շուրջպարը նա համարեց հայ ժողովրդի միասնությունը խորհրդանշող կարևոր միջոցառում. «Երբ Նիգ-Ապարանը շուրջպար կազմակերպեց, ողջ աշխարհի հայությունը պարեց, ով կարող էր՝ եկավ Արագածի շուրջ պարեց, իսկ Կանադայի, Իսպանիայի, Մոսկվայի հայերը, ովքեր չէին կարող գալ, իրենց եկեղեցու շուրջ պարեցին»: Նա կարևորեց նաև համահայկական ծառատունկը[15]: Որպես ապարանցիների ինքնության կարևոր խորհրդանիշեր՝ Տեր Մխիթարն առանձնացրեց հին Նոր տարվա տոնախմբությունը, որը միությունը մեծ շուքով ամեն տարի նշում է Ապարանում, երբ ավանդական զուռնայի տակ բոլորը բռնում են քոչարի, Մայիսի 28-ը՝ որպես Բաշ-Ապարանի հաղթանակի օր, և երիտասարդության ջահերով երթը դեպի Ապարանի հուշահամալիր: Աշխատանքներին ակտիվ մասնակցում է երիտասարդությունը, որոնք, բացի տարբեր մշակութային

---

[12] *Նույն տեղում, տ. 8, էջ 7:*

[13] *«Նիգ-Ապարան» հայրենակցական միության գործադիր տնօրեն Տեր Մխիթարի հետ հարցազրույցն իրականացվել է 07.07.2011 թ. Երևանում: Տե՛ս* **Գալստյան Ն.,** *Խորացված հարցազրույցներ, տ. 9, էջ 3:*

[14] *«Նիգ-Ապարան» ՀԲՀԿ խորհուրդ, Հայտարարություն//Առավոտ, 01.23.2008, «Նիգ-Ապարանը»-ը որոշեց http://www.panorama.am/am/politics/2008/01/23/nig, «Նիգ-Ապարան» հայրենակցական միությունը սատարելու է ՀՀԿ-ին, http://7or.am/archives/9027*

[15] *«Նիգ-Ապարանի» գործադիր տնօրենի հետ հարցազրույցը տե՛ս* **Գալստյան Ն.,** *Խորացված հարցազրույցներ, տ. 9, էջ 4:*

միջոցառումների կազմակերպումից, «ընկնում են գյուղեգյուղ, հավաքում են ապարանցիների բառ ու բանը, տատիկ-պապիկների երգերը, ճաշատեսակների կորած ձևերը»[16]:

Հայրենակցական միությունները, համատեղ հրավիրելով հիմնադիր համագումար (2006 թ.), ստեղծել են մի նոր կազմակերպություն՝ «Հայրենակցական հասարակական կազմակերպությունների միաբանություն» անվանումով[17]:

Երկրորդ. հայրենիքը և բնօրրանը կորցրած համերկրացիներին և նրանց սերունդներին միավորող հայրենակցական միություններ: Դրանց ծագման, թվի, վայրի և գործունեության ուղղվածության վրա էական ազդեցություն ունեցան հայ ժողովրդի կյանքում տեղի ունեցած խոշոր պատմական իրադարձությունները: Առաջին հայրենակցական միությունների ստեղծումը կապվում է թուրքական իշխանությունների՝ 1915-1922 թթ. իրագործած հայերի ցեղասպանության և իրենց հայրենիքից բռնագաղթած մարդկանց ցուցաբերվող աջակցության հետ:

Հայրենակցական միությունների և նրա անդամների թիվը շեշտակի աճեց Առաջին համաշխարհային պատերազմից հետո: Բուլղարիայում ստեղծվեցին Դարանաղյաց «Կամախ-Մեպուհ», շապինգարահիսարցիների՝ «Ռազմիկ», ադրիանուպոլսեցիների՝ «Արշակունյաց», պոլսեցիների՝ «Պետրոս Դուրյան», «Կովկասահայերի եղբայրություն» և այլ կազմակերպություններ, որոնք գործեցին մինչև Երկրորդ աշխարհամարտը: Բազմաթիվ հայրենակցական միություններ ստեղծվեցին Կ. Պոլսում 1919-1921 թթ., որոնք միավորում էին ցեղասպանությունը վերապրած արևմտահայ գավառների բեկորներին: Հայրենակցական միություններ հիմնվեցին նաև Հարավային Ամերիկայում. առաջիններից էին Բուենոս Այրեսում 1915 թ. հիմնված «Հաճընի», 1921-ին՝ Մարաշի, 1924-ին՝ «Այնթափի» և այլ հայրենակցական միությունները: Դրանց գործունեության հիմնական նպատակն էր պահպանել թուրքական սպանդից մազապուրծ հայրենակիցների ֆիզիկական գոյությունը, իսկ որբերին, անապաստաններին, ընչազուրկներին ապահովել ժամանակավոր կացարաններով, աշխատանքով, ապրուստի միջոցներով[18]: Երբ արևմտահայությունը և նրանց հետնորդները վերջնականապես զրկվեցին բնօրրան վերադառնալու հնարավորությունից, հայրենակցական միությունների գործունեությունը թևակոխեց նոր փուլ. իրենց գործունեության ապագան կապեցին Խորհրդային Հայաստանի հետ: Հայրենակցականները որդեգրեցին Հայաստանի վերաշինման ու կառուցման գաղափարը՝ ծրագրելով այնտեղ տեղափոխել հարազատ բնակավայրերը հարկադրաբար լքած հայրենակիցներին[19]: Ինչպես նշում է պատմաբան Հ. Մելիքսեթյանը, 1921-1936 թթ. ընթացքում օտա-

---

[16] Նույն տեղում, տ. 9, էջ 5:

[17] **Բաբաջանյան Ա.,** Մեր խորին համոզմամբ՝ «ապաքաղաքական» հայրենակցականները միաբանվեցին, http://www.zhamanak.com/article/4254/

[18] Նույն տեղում, էջ 114:

[19] Նույն տեղում, էջ 114-115:

րությունից հայրենիք է վերադարձել 42286 տարագիր[20]: Հայրենակցական միությունները ձեռնամուխ եղան Հայաստանում իրենց հայրենի քաղաքների, գյուղերի, գավառների անունները կրող ավանների կառուցման: Առաջինը ամերիկաբնակ արաբկիրցիներն են դիմել Հայաստանի կառավարությանը՝ Նոր Արաբկիր ավան կառուցելու և այնտեղ տեղափոխվելու խնդրանքով[21]:

Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո հայրենակցական միությունները աջակցեցին 1946-1948 թթ. Հայաստան ներգաղթի հաջող իրականացմանը՝ հանգանակելով 1.5 մլն դոլար: Աշխարհի շուրջ 15 երկրներից Խորհրդային Հայաստան ներգաղթեց մոտ 100 հազ. մարդ[22]: Հայրենակցական միությունները հսկայական միջոցներ տրամադրեցին ներգաղթածների համար բնակելի նոր թաղամասեր, ավաններ հիմնելու նպատակով: Այնուհանդերձ, առաջին տարիներին հայրենադարձներն ունեցան տնտեսական մի շարք դժվարություններ: Բացի դրանից, հայրենադարձները լեզվական, մշակութային, կենցաղային և այլ հարցերում տարբերվում էին նաև տեղաբնիկներից, ինչը նրանց հետ փոխհարաբերությունների և սոցիալ-մշակութային հարմարեցման առումով հանգեցնում էր որոշակի խնդիրների[23]:

Հայրենակցական միությունների համախմբման և համագործակցության համար կարևոր էր 1946 թվականին Նյու Յորքում հիմնված Միջազգային հայրենակցական միությունը, որի նպատակն էր համակարգել այդ կազմակերպությունների գործունեությունը՝ ի նպաստ Հայաստան ներգաղթածների: Միջհայրենակցական միությունն իր առաջին պատգամավորական ժողովում դիմում է հղել ՄԱԿ-ին՝ կոչ անելով հետևյալը. «Ի սեր արդարության և ի հատուցումն անիրավված հայ ժողովրդի՝ վերադարձվեն բռնագրավյալ գավառները՝ առնվազն վիլսոնյան սահմաններով, և կցվեն Խորհրդային Հայաստանին»[24]:

---

[20] **Մելիքսեթյան Հ.,** *Հայրենիք-սփյուռք առնչությունները և հայրենադարձությունը (1920-1980թթ.), Ե., 1985, էջ 115:*

[21] *Հայաստանի կառավարության որոշմամբ 1925 թ. նոյեմբերի 29-ին Երևանի հյուսիսարևմտյան մասում հիմնադրվել է Նոր Արաբկիր ավանը (ճարտարապետ Ալ. Թամանյան): Հայաստանի կառավարության ընձեռած հնարավորություններով ու համապատասխան հայրենակցական միությունների միջոցներով 1927-ին ստեղծվեցին Նոր Եվդոկիա, Նոր Մալաթիա, 1928-ին՝ Նոր Սեբաստիա, 1930-ին՝ Նոր Խարբերդ, 1931-ին՝ Նոր Թոմարզա, 1934-ին՝ Նոր Կեսարիա և այլ ավաններ: Հայրենակցական միությունները նպաստեցին ապրուստի անհրաժեշտ պայմաններ ստեղծելուն և աշխատանքով ապահովելուն. բացեցին արհեստանոցներ և գործարաններ, ինչպես նաև աջակցեցին դպրոցական, բժշկական սարքավորումներով, դեղորայքով և կենցաղային այլ անհրաժեշտ իրերով: Սփյուռքի հայրենակցական միությունները Երկրորդ համաշխարհայինի տարիներին (1939-1945 թթ.) դեղորայք և պարեն են ուղարկել խորհրդային բանակի մարտիկներին, միջոցներ տրամադրել «Սասունցի Դավիթ» և «Զորավար Բաղրամյան» տանկային շարասյուների ստեղծմանը: Տե՛ս Սփյուռքահայ կազմակերպությունները, էջ 114-115:*

[22] **Մելքսեթյան Հ.,** *նշվ. աշխ., էջ 115, 274, 399:*

[23] *Տե՛ս* **Ստեփանյան Ա.,** *XX դարի հայրենադարձությունը հայոց ինքնության համատեքստում, Ե., 2010, էջ 202-241:*

[24] *Սփյուռքահայ կազմակերպությունները, էջ 116:*

Խորհրդային տարիների հայրենակցական միությունները Հայաստանում իրականացրեցին մի շարք հայրենանվեր ծրագրեր և մեծ գործ կատարեցին հայ ժողովրդի պատմության ու մշակույթի կորուսյալ էջերի հավաքման ու հրատարակման գործում[25]: Այդ տարիներին դրանք այն հիմնական կառույցն էին, որ, սերտորեն պահպանելով կապը հայրենիքի հետ, նպաստեցին նաև Սփյուռքի ինքնությանը և սփյուռքահայերի ուծացման կասեցմանը:

Հայաստանի անկախացումից հետո հայրենակցական միությունների գործունեությունը թևակոխեց որակապես նոր շրջան: Եթե մինչև այդ դրանք ստեղծվում և գործում էին օտար ափերում, ապա անկախացումից հետո հայրենակցական միությունները ստեղծվում, պետական գրանցում և ազատ գործունեություն են ծավալում Հայաստանում: Ներկայումս արևմտահայ հենքով Հայաստանում գործող շուրջ 19 հայրենակցական միություններ միավորվել և ստեղծել են Հայաստանի հայրենակցական միությունների խորհուրդը: Խորհուրդը հրատարակում է նաև «Բնօրրան» ամսագիրը, որտեղ պրոֆ. Գ. Խրլոպեանը, անդրադառնալով դրանց գործունեության նպատակին, նշում է. «Հայրենակցական միությունների սեպուհ նպատակն է նոր սերնդի գիտակցության մեջ կենդանի ու գործող պահել հայ պատկանելության ոգին, հայու պահանջատիրական ոգին, ամուր պահել կապը մայր հայրենիքի և սփյուռքի: Այս ոգով են հայրենակցական միությունները օգնում դպրոցներին, մշակութային, ազգային վերաշինության, բարեխնամ հաստատություններին ու կազմակերպում հավաքույթներ, ազգային, բնօրրանյան հիշատակները ոգեկոչող հայրենակցական ավանդական տոնախմբությունները»[26]: Հայրենակցական միությունների մեջ ազգային և մշակութային ինքնության պահպանումը սկսվում է կորուսյալ պատմական բնակավայրերի անունով այն կոչելը՝ Արաբկիր, Հաճրն, Մուսալեռ, Վասպուրական, Եդեսիա, Զեյթուն, Մարաշ և այլն: Դրանք սոսկ աշխարհագրական անվանումներ չեն, իսկ այդ վայրերի անվանումների օգտագործումը որոշակի էթնիկ տարածքի վերաբերյալ արթնացնում է որոշակի հիշողություններ: Ինչպես նշում է ազգագրագետ Հ. Մարությանը, «պատկերացված լանդշաֆտները, դրանց անվանումները անհատի կամ տարաբնույթ խմբերի մեջ ստեղծում են յուրահատուկ «ինքնության քարտեզներ» և խիստ կարևոր են նաև ինքնության կառուցման հարցում: Այսպես, կորուսյալ հայրենիքի պատկերացումները՝ փոխանցվող հենց անվանումների մակարդակով, կարող են անցնել սերնդեսերունդ՝ արթնացնելով առաջին հերթին կարոտ, հավատարմություն,

---

[25] Հայրենակցական միությունների ջանքերով հրատարակվեցին «Պատմություն Մալաթիո հայոց», «Խարբերդ և անոր ոսկեղեն դաշտը», «Պատմություն Եվդոկիո հայոց»,»Պատմություն Չարսանջակի», «Պատմություն Այնթեպի հայոց», Ուրֆայի, Հաճընի, Տարոնի, Պաղնատան և այլ գավառների և քաղաքների պատմությանը վերաբերող աշխատություններ: Տե՛ս **Մելիքսեթյան Հ.**, *նշվ. աշխ., էջ 404:*

[26] **Խրլոպեան Գ.**, *Հայրենակցական գիտակցության ուժը// Բնօրրան, թիվ 1-2-3-4 (17-20), 2004-2007, էջ 3:*

նվիրվածություն անցյալի պատկերներին: Այդ կապակցությամբ ինձ բազմիցս վիճակվել է տեսնել, թե ինչպես են փոխվում ներգաղթած վասպուրականցիների 2-3-րդ սերունդների ներկայացուցիչների տրամադրությունը, հոգեվիճակը, երբ զրույցներում հիշատակվում են Վան, Այգեստան, Աղթամար, Արտամետ տեղանունները»: Որպես կարևոր ինստիտուցիոնալ կառույց՝ այդ կազմակերպությունները իրենց ներէթնիկ խմբի համար կատարում են համախմբող գործառույթ ինչպես նոր անդամների ակտիվ ներգրավման, այնպես էլ նրանց անցյալին ծանոթացնելու իմաստով. «Նախնիների կամ ծնողների՝ հայրենի բնակավայրերի շուրջ տարվող զրույցները, հատկապես երբ դրանք պարբերաբար են կրկնվում, կարող են դրդել նաև որոշակի գործողությունների՝ ճամփորդություն ծնողների կամ նախնյաց հայրենիք, կարոտի գրականության ու համապատասխան երաժշտական մշակույթի ձևավորում, որոշակի գործունեության ծավալում՝ ուղղված կորցրած վայրերը վերադարձնելուն և այլն»[27]:

Մեկ տասնյակից ավելի հայրենակցական միությունների ծրագրերի ուսումնասիրությունից և նրանց անդամների հետ իրականացրած խորացված հարցազրույցներից գալիս ենք այն եզրակացության, որ նրանց գործունեության անկյունաքարը իրենց պատմական բնօրրանի մասին հիշողությունը վառ պահելու խնդիրն է, որի վրա կառուցակցվում են մնացած գործողությունները: Իսկ հիշողությունը, մասնավորապես պատմական հիշողությունը, ինչպես նշում է Հ. Մարությանը, «էթնիկ ընդհանրություն», «ազգ», «ազգային ինքնություն» եզրերը բնորոշող կարևորագույն տարրերից է: Ի թիվս ծեսերի, ավանդույթների, առասպելների՝ էթնիկ ընդհանրության կամ ազգի անդամների միջև կիսվող հիշողությունը հանդես է գալիս իբրև դրանց անդամներին կապող, նրանց հարաբերությունները և գործողությունները կառուցող միջոց[28]: Այսպես, ըստ «Հաճըն» հայրենակցականի ատենապետ Հ. Գրիգորյանի, միության գործունեության նպատակն է «կորցրած երկրի հիշողությունը պահելու, վերականգնելու, միախմբվելու, հայկական հարցը, մշակութային արժեքները, պատմական հիշողությունը իրենց ժառանգների մեջ սերմանելու համար, և սա միջոց է պահպանելու այն ամենը, ինչը ունեցել է հաճընցին իր կորուսյալ հայրենիքում»[29]: Հայրենակցական միությունների գործունեությունն ուղղված է կորուսյալ հայրենիքի մասին ներէթնիկ այդ խմբերի և նրանց սերունդների անհատական և կոլեկտիվ հիշողության պահպանմանը, որը ձևավորում է նրանց ինքնությունները[30]: Այդ նպատակով Հայաստանում և

---

[27] **Մարության Հ.,** *Հայ ինքնության պատկերագրություն: Ցեղասպանության հիշողությունը և Ղարաբաղյան շարժումը (հ. 1) Ե., 2009, էջ 41:*

[28] *Նույն տեղում, էջ 30:*

[29] *«Հաճըն» հայրենակցական միության ատենապետի հետ հարցազրույցը տե՛ս* **Գալստյան Ն.,** *Խորացված հարցազրույցներ, տ., 6, էջ 5:*

[30] *Անհատական և կոլեկտիվ հիշողության պահպանման հարցերին մանրամասն անդրադարձել է փիլիսոփա, սոցիոլոգ Մ. Հալբախսը, տե՛ս* **Хальбакс М.,** *Что такое коллективная память [Неприкосновенный запас, 2005, N 2-3(40-41)], http://www.magazines.russ.ru/nz/2005/2/ha2.html*

Սփյուռքում հայրենակցական միությունները կատարում են մի շարք աշխատանքներ, որը պայմանականորեն կարելի է բաժանել մի քանի ուղղությունների.

Առաջին. *որպես ներէթնիկ խմբերի ինքնությունների պահպանման խորհրդանշաններ են համարվում Հայաստանում և Սփյուռքի մի շարք վայրերում հայրենակցական միությունների նախաձեռնությամբ կառուցված հուշակոթողները, թանգարանները և այլն: Այսպես, Կիլիկիո Հաճընի հիշատակը վառ պահելու, աշխարհասփյուռ հաճընցիների համար որպես ինքնության համախմբման խորհրդանշան են Նոր Հաճընքաղաքում կառուցված Հաճընի հերոսամարտին նվիրված հուշակոթողը և պատմական Հաճընի պատմության թանգարանը[31]: Այդպիսի հուշակոթողներ ունեն նաև գործող մի շարք հայրենակցական միություններ: Դրանք, որպես կոլեկտիվ հիշողության պահպանման կարևոր միջոց, իրենց շուրջն են համախմբում այդ կազմակերպությունների տարբեր սերունդներին և նրանց կապում նախնյաց բնօրրանի հերոսական պատմությանը:*

Երկրորդ. *հայրենակցական միությունների կողմից տարեդարձների, հիշատակի օրերի, անվանակոչումների ամենամյա նշումները, որի նպատակով կազմակերպվում են մեծ միջոցառումներ, և որին մասնակցում են ինչպես Հայաստանի, այնպես էլ Սփյուռքի այդ կազմակերպության անդամները: Համատեղ այդ հիշատակի օրերի և տարեդարձների նշումը անդամների համար ունի էթնոհամախմբող նշանակություն: Այսպես, «Մուսա Լեռ» հայրենակցականը ամեն տարի սեպտեմբերին հուշակոթողի մոտ մեծ շուքով նշում է Մուսա լեռան հերոսամարտի հաղթանակի օրը[32]: Հայաստանում գործող հայրենակցական միություններից յուրաքանչյուրն ունի տարեդարձներ, հիշատակներ նշելու իրենց օրերը: Բացի դրանից, յուրաքանչյուր տարվա ապրիլի 24-ին հայրենակցական միությունները միասին այցելում են Ծիծեռնակաբերդ և իրենց հարգանքի տուրքը մատուցում անմեղ նահատակների հիշատակին[33]:*

---

[31] *Հաճընհայրենակցականի ատենապետի հետ հարցազրուցը տե՛ս* **Գալստյան Ն.,** *Խորացված հարցազրույցներ, տ. 6, էջ 6:*

[32] *Մուսալեռցիների ինքնության կարևոր խորհրդանիշներից է հարիսան, որը որպես մատաղ ամեն տարի նրանք եփում և բաժանում են ժողովրդին: Հարիսայի խորհուրդը կապված է 1915 թ. Մուսա լեռան հերոսամատի հետ, երբ մարդիկ լեռան գագաթին սովամահ չլինելու համար օրերով հարիսա են կերել: Հերոսամարտի 95-ամյակի կապակցությամբ հուշարձանի մոտ հարիսան պատրաստվել է 95 կաթսաներով, իսկ խարույկի շուրջ թմբուկի և զուռնայի հնչյունների տակ մինչև ուշ գիշեր պար են բռնել մուսալեռցիները և հուշարձան այցելածները: Ականատեսներից հետաքրքիր ազգագրական և բանահյուսական նյութեր են հավաքել և հրատարակել Վ. Սվազլյանը և Գ. Գյոզալյանը: Տե՛ս* **Սվազլյան Վ.,** *Մուսա լեռ, Հայ ազգագրություն և բանահյուսություն, Ե., 1984, N 16:* **Գյոզալյան Գ.,** *Մուսա լեռան ազգագրությունը, Ե., 2001: Հայրենակցական միության գործունեությունը լուսաբանվում է* http://www.musaler.com/:

[33] *Ազգագրագետ Հ. Մարությանը, անդրադառնալով Մեծ Եղեռնի հուշահամալիրին հայրենակցականների կողմից դրվող ծաղկեպսակներին, կատարել է հետևյալ դիտարկումը. «Միշտ էլ եղել են ծաղկեպսակներ հայրենակցական միությունների կողմից, որոնք որպես*

Երրորդ. *Հայրենակցական միությունների կողմից ներէթնիկ խմբի մշակութային ինքնության պահպանմանն ուղղված միջոցառումներ: Թերևս այդ մոտեցումը առավել լավ բանաձևված է «Վասպուրական» հայրենակցական միության կողմից «Վանը կորցրել ենք, սակայն Վանի մշակույթը չենք կորցնի» խորագրում*[34]*: Հայրենակցականները համարվում են այն հիմնական կառույցը, որի միջոցով հավաքվում, ամբողջականացվում և կորստից փրկվում են այդ խմբերի նյութական և հոգևոր մշակույթի մի շարք անկրկնելի մասունքներ՝ բարբառ, երգ ու պար, ճաշատեսակներ և այլն:*

Չորրորդ. *հայրենակցական միությունների կողմից իրենց պատմական բնօրրանների անցյալին և ներկային վերաբերող գիտաժողովների, հանդիպումների, հրատարակումների և ուխտագնացությունների կազմակերպում. հայրենիքում և Սփյուռքում որոշ հայրենակցական միություններ հրատարակել կամ հրատարակում են նաև իրենց պաշտոնաթերթերը և պարբերականները*[35]*՝ «Նոր Այնթափ», «Նոր Սեբաստիա», «Նոր Արաբկիր», «Նոր Խարբերդ», «Նոր Մարաշ», «Վարագ», «Նոր Կեսարիա» և այլն:*

Հինգերորդ. *հայրենակցական միությունները՝ որպես մշակութային ժառանգության պահպանման և հաջորդ սերունդներին այն փոխանցելու կարևոր ինստիտուցիոնալ կառույց: Նոր սերնդին իրենց նախնիների պատմությանը, ավանդույթներին և բարբառին ծանոթացնելու համար հայրենակցականները այդ խնդրի լուծման կարևոր ուղի են համարում իրենց*

կանոն իրենց շարքերում միավորում էին հիմնականում արևմտահայության երկրորդ-երրորդ սերնդի ներկայացուցիչներին: 2000-ական թթ. սկզբին, սակայն, մեջտեղ եկան Հայաստանի Հանրապետության մարզերի ու շրջանների բնակչության հիմամբ ստեղծված հայրենակցական միություններ, որոնք շատ արագ ներգրավվեցին քաղաքական դաշտ՝ դառնալով ինչ-ինչ քաղաքական ուժերի և անհատների հենարաններ: Որպես այդպիսին՝ բավական ակտիվ էր «Նիգ-Ապարան» հայրենակցական միությունը, ինչն էլ անմիջապես դրսևորվեց ծաղկեպսակ-»ցուցապաստառներում». 2005 թ. նրանց բերած «ծաղկեպսակը» շուրջ երեք մետր բարձրության գլոբուսի ծաղկային ձևավորմամբ մանրակերտ էր (իսկ վերնամասում ամրացված ցուցապաստառով՝ ավելի քան 4 մատ բարձրությամբ) և ամենամեծը (ու հետևաբար աչքի զարնողը) իր ծավալներով Մեծ Եղեռնի ոգեկոչման 90-ամյակի օրերին»: Տե՛ս **Մարության Հ.,** *նշվ. աշխ., էջ 94-95:*

[34] *Միջոցառումը (2010 թ.) նվիրված էր Վասպուրական աշխարհի անկրկնելի մշակութային ժառանգության պահպանմանը, կարդացվեցին Վանի մշակույթի վերաբերյալ զեկուցումներ, և ցուցադրվեցին ֆիլմեր: Կազմակերպության կարևոր մշակութային միջոցառումներից էին նաև Արծիվ Վասպուրականի հուշարձանի մոտ Վանի ինքնապաշտպանության 95-ամյակին նվիրված մեծ դաշտահանդեսը, ցուցահանդեսները, ծննդյան օրվա կապակցությամբ այցելությունը Խրիմյան Հայրիկի շիրմին և այլն: Այդ մասին «Վասպուրական» հայրենակցականի նախագահի տեղակալ Հ. Մարությանի հետ հարցազրույցը տե՛ս* **Գալստյան Ն.,** *տ. 5, էջ 5: Տե՛ս նաև http://www.vaspurakan.am/:*

[35] *Դրանցից հատկապես առանձնահատուկ ուշադրության է արժանի «Վասպուրական» հայրենակցականի նախաձեռնությամբ 2010 թ. հոկտեմբերին Երևանում տեղի ունեցած «Վան 2865» միջազգային գիտաժողովը, որը նվիրված էր Վան քաղաքի առաջին հիշատակության 2865-ամյակին: Տե՛ս http://www.vaspurakan.am/10-01-:*

երիտասարդական թևերի ստեղծումը: Այն հնարավորություն է տալիս նաև ապահովելու շփումներ Սփյուռքում և Հայաստանում գտնվող կազ-մակերպության մասնաճյուղերի երիտասարդների միջև:

Վեցերորդ. *հայրենակցական միությունները՝ որպես հայոց ցեղա-սպանությունը վերապրածների, նրանց սերունդների իրավունքների և շահերի արտահայտիչ և հայկական հարցի արդարացի լուծման շահագրգիռ կողմ: Հայրենակցականները մեծ աշխատանք են կատարում նաև հայոց ցեղասպանության ճանաչման հարցում:*

Հետազոտության արդյունքները ցույց տվեցին, որ հայրենակցական միությունների առջև ծառացած ամենակարևոր խնդիրը ֆինանսական միջոցների ձեռքբերման և ֆինանսական կայունության ապահովումն է: Եթե այդ հարցը որոշ հասարակական կազմակերպություններ հիմնականում լուծում են միջազգային դոնոր կազ-մակերպությունների տրամադրած դրամաշնորհներով, այսինքն՝ «դրսի» ֆինանսական միջոցներով, ապա հայրենակցական միությունների ծրագրերը դրանց հետա-քրքրությունների շրջանակից դուրս են: Ֆինանսավորման աղբյուրը միության անդամներից գանձվող անդամավճարներն են և նվիրատվությունները, որոնք չեն բավարարում ծրագրերի իրականացմանը: Որոշ հայրենակցական միություններ չունեն բավարար գրասենյակային տարածք և ժամանակակից կապի միջոցներ: Մյուս կարևոր հարցը, որը ծառացած է այդ միությունների առջև, սերնդափոխության խնդիրն է: Այսպիսով, ի տարբերություն Արևմուտքի, որտեղ քաղաքացիական հասարակությունը իր բովանդակությամբ վերջին հաշվով ուղղված է մարդու իրավունքների պաշտպանությանը, Հայաստանում, բացի այդ հարցերից, քաղաքացիական հասարակության դաշտում գործող ոչ կառավարական կազմակերպությունների որոշ մասը հետամուտ է նպաստելու ազգային խնդիրների լուծմանը:

ЗЕМЛЯЧЕСКИЕ СОЮЗЫ И ОСОБЕННОСТИ ФОРМИРОВАНИЯ ГРАЖДАНСКОГО ОБЩЕСТВА В АРМЕНИИ

ГАЛСТЯН Н. М.

Резюме

Деятельность земляческих союзов способствует сохранению национальной самобытности в процессе формирования гражданского общества в Армении. В своей деятельности земляческие союзы руководствуются законом РА “Об общественных организациях”. Земляческие союзы являются некоммерческими общественными организациями, целью которых не является получение прибыли. Общественные организации можно разделить на две группы. Первую группу составляют земляческие союзы, сформировавшиеся по марзам (областям) либо на основе особенностей

внутриэтнических групп армянского народа (“Ниг–Апаран”, “Сюник”, “Лорва Дзор” (“Лорийское ущелье”), “Джавахк”, “Арцах” и другие, главной целью которых является укрепление связей с земляками, их привлечение к участию в культурной жизни и экономическом развитии Армении. Во вторую группу входят союзы, объединяющие земляков, потерявших родину, и их поколения (“Муса Лер”, “Васпуракан”, “Аджн”, “Арабкир” и другие). Деятельность этих групп направлена на сохранение культурной самобытности их исторической родины.

COMPATRIOTIC UNIONS AND THE PECULIARITIES OF THE CIVIL SOCIETY FORMATION IN ARMENIA

N. GALSTYAN

Abstract

The activities of compatriotic unions in Armenia are regulated by RA Legislation on non-governmental organisations. Compatriotic unions are non-profit organisations, which are conventionally divided into two types: organisations formed on the basis of regions (marzes) or on the peculiarities of intra-ethnic Armenian groups ("Nig Aparan", "Syunik", "Lorva Dzor" ("Lori Valley"), "Javakheti", "Artsakh”, etc.); and organisations uniting compatriots, who lost their homeland ("Musa Ler", "Vaspurakan”,“Hajn”, “Arabkir”, etc). The aim of these organisations is to preserve people's ethnic and cultural identity.